

Կողմ Կաթուղիկ. Անւոյ. — Face latérale de la Cathedrale (Ani).

Նապարհ ասոիՃանաւոր ընդ զառ 'ի վայր երկիր ցը-դեւտային, և 'ի սպառուած նորին կայ եկեղեցի փոքր կրկին մատրամբք, անաղարտ և անդիր, և ըստ ա-ւանդութեան՝ շինեալ վասն դշխոյի ուրումն, որոյ և բնակարանին փլածք երևին առ երի։ — Ի հիւսիսա-կողմն քաղաքին ընդ մէջ աւագ դրանն և 12անկիւնի եկեղեցւոյն կայ այլ եկեղեցի (Խաչի?) քառակուսի խաչաձև արտաքուստ և բոլորշի թևք խաչաձև քա-ռակուսի 'ի ներքուստ, անսիւն գմբեթաւորեալ, ու-նելով սիւնաբարձ անդաստակ յարևմտից, այլ թէ որ-քան ներսէ շէն՝ ոչ ունիմ ասել։ — Մերձ 'ի հիւսի-սային անձկագոյն ծայր քաղաքին 'ի քարափն Ծաղ-կոցաձորոյն կայ մատուռն փոքրեալ 'ի վիմի, որպէս և հանդէպ նմին յարևելակողմն այլոյ մատրան մնա-ցուածք երևին։

Յետ եկեղեցեացդ նշանաւոր շէնք ՅԱՆի են Մըղ-կիթն մերձ ՅԱռաքելոց եկեղեցին, շինուած երկայ-նաձև քառակուսի յերիս տրոհեալ երկկարդ սեամբք, ունելով կամարակապ ներքնատունս և աշտարակ ուղղանկիւնի, թուի յայլ ինչ պէտս շինեալ տեղւոյն յառաջագոյն. յարևմտեան որմն նորին կայ արձա-նագիր պարսիկ լեզուաւ, հրաման Իպուսէիտ Պէհա-տուր խանի (որ թուի գրեալ յամին 1319) և պա-տուիրէ մաքսաւորաց չնեղել զԱնեցիս։ — Յելից նո-րա և 'ի հիւսիսոյ կաթուղիկէին իբրև 'ի միջավայր քաղաքին ամբառնայ այլ աշտարակ ուղղանկիւնի մի-բայաձև՝ կործանեալ գագաթամբ, որոյ 84 քարեղէն աշտիճանք են ցպատշգամն, իբրև դիտանոց կանգ-նեալ։ — Բաղանիքն յարևելեան հարաւային անկեան քաղաքին, 'ի հարաւոյ եկեղեցւոյ Փրկչին, զորով կու-տեալ են դերբուկք աւերակաց. երկայնաձև քառա-կուսի է շինուածն, իբրև 58' ընդ երկայն և 44' ընդ լայն. և մի կողմն ընդ լայնն յերկուս անձուկ քա-ռակուսի սրահակս բաժանեալ է, միւս ընդարձա-